№ 204 ՇԱԲԱԹ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 15 1901 ՇԱԲԱԹ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 15 № 204

ՔՍԱՆԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 բուբլի. կէս տարվան 6 բուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տելեֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ ազգ օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տելեֆոն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Միքայէլ Ղուկասեան, Մարթա Բահաթրեան, Հռիփսիմէ Խանդամիրեան եւ Ներսէս Գանջեցեան ցաւօք սրտի յայտնում են իրանց բարեկամներին եւ ծանօթներին՝ առաջին երկուսը՝ իրանց թանգագին քրոջ, իսկ երրորդ եւ չորրորդը՝ իրանց սիրելի մօրաքրոջ՝

ՆԱԽՇՈՒՆ ՍԱՐԳՍԵԱՆ ԽՈՒՆՈՒՆՑԻ

մահը, որ տեղի ունեցաւ Թիֆլիսում, սեպտեմբերի 12-ին։ Հոգեհանգիստը լինելու է շաբաթ, սեպտեմբերի 15-ին, երեկոյեան ժամի 6-ին, հանգուցեալի բնակարանում.— Բէքուզովսկայա (Նախկին Սադովայա) փողոց, տուն Ամիրազովի, № 58։ Յուղարկաւորութիւնը տեղի կունենայ կիրակի, սեպտեմբերի 16-ին, առաւօտեան ժամի 10-ին, դէպի Մողնու ս. Գէորգ եկեղեցին, իսկ թաղումը—Խօջիվանքի գերեզմանատանը։

2—2

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Պատուի խնդիր է.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Պետերբուրգից. Նամակ Դէրբէնտից. Ներքին լուրեր. — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Ֆրանսիայից. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Ցուցահանդէսը։

ՊԱՏՈՒԻ ԽՆԴԻՐ Է

Տեղական լրագիրները մի քանի ժամանակից ի վեր արձանագրում են դէպքեր, երբ նուիրատուութիւններ են ժողովվել չքաւոր ուսանողների օգտին, բայց որոնց վերաբերութեամբ կասկած է առաջացել թէ արդեօք այդ նուիրատուութիւնները իսկական նպատակի՞ն ծառայել և արդեօք կուլ չի՞ն գնացել բաղդախնդիրների որկորներում։

Կովկասեան ուսանողները, որոնց վերաբերում են այդ կասկածները, պէտք է առանձին ուշադրութիւն դարձնեն այդ դէպքերի վրա և աշխատեն պարզել եղելութիւնը, զտելով զրպարտութիւնը ճշմարտութիւնից և զեղծումը թիւրիմացութիւնից։

Դա կարեւոր է, թէ այն պատճառով, որ զեղծում կատարողները հանդէս գան և պատժվեն, թէ այն դիտումով, որ մի քանի անբարոյական անձանց պատճառով չը վնասվի ուսանողներին օգնելու գործը և թէ բամբասանքներից ազատ մնան այնպիսի անձինք, որոնք զուր տեղը կամ չարամտութեամբ կասկածի են ենթարկվել։

Հասարակութեան այն դասակարգը, որ ուսանող անունն է կրում, միշտ յայտնի է եղել իր շիտակութեամբ, ազնուութեամբ, իր իդէալականութեամբ։ Թող ինչ ուզում են տան ուսանողների մասին, որ նրանք, օրինակ, բաւականաչափ ուսումնասէր չեն, լուրջ չեն աշխատում, մեծ հարկ են տալիս երիտասարդական հակումներին—այդ դեռ տանելի է, այդ որոշ տեսակէտից ներելի է. բայց մարսել մեղադրանքներ ուսանողի խարդախութեան, կեղծիքի, խաչագողութեան և անբարոյական վարմունքների մասին—դա անկարելի պէտք է համարվի անպայման։ Եթէ կան ուսանողների մէջ խայտառակ բացառութիւններ, դրանք պէտք է ուսանողական-հասարակական կարծիքի կողմից անխնայ պատժվեն, ուսանողական շրջանից վռնդվեն, որպէս զի ստոր անհատների պատճառով չարատաւորվի ուսանողութեան անունը և կոչումը։

Այդ հանգամանքի վրա մենք դարձնում ենք մեր ուսանողների ուշադրութիւնը։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՄՈՒԼ

Լրագիրները արդէն սկսել են յօդուածներ նուիրել Վրաստանի՝ ռուսաց տիրապետութեան տակ մտնելու հարիւրամեակին։ Խօսել են շատերը, կը խօսեն էլ շատերը։ Լուռ մնալ չէր կարող վրաց ազգի այնքան ամենաջերմեռանդ, ամենաթունդ բարեկամը, ինչպիսին է Վասիլի Վէլիչկո։ Իր անյայտութեան միջից նա յանկարծ լոյս ընկաւ Սուվորինի լրագրի էջերում եւ սկսեց յօդուածներ գրել վրացիների մասին։ Գովասանք, փառաբանութիւն, ծափահարութիւններ եւ խոնարհ ողջոյններ—ահա ինչ է նա ուղարկում վրացիներին Նեվայի ափերից։ Կարդում էք այդ անչափ ներբողները եւ տեսնում էք, որ այդ մի եւ նոյնը հարիւր եւ աւել անգամ Վէլիչկոն ասել ու կրկնել է այն ժամանակներում, երբ նա հրապարակախօս էր Կովկասում։ Ոչինչ նոր բան. նոյն իսկ ֆրազները, նոյն իսկ նախադասութիւնները նոյնն են մնացել։ Ինքն ըստ ինքեան միանգամայն հասկանալի է, որ Վէլիչկոն իր այդ ներբողների մէջ անպատճառ պիտի աքացի տար հայերին։ Եւ տալիս է։

Օրինակ, նա ասում է, որ հայերի մէջ նոյն իսկ ատաւածաբանութեան դոկտորներն էլ գինեվաճառ են դառնում։ Բայց թողնենք հայերին։ Կան բարեկամներ, որոնք թշնամիներից էլ վատ են։ Եւ վրաց հասարակութիւնը, գոնէ նրա ինտելիգենցիայի մի մասը այդպէս է վերաբերվում Վասիլի Վէլիչկոին։ Ահա մի դժբախտ ճակատագիր... Մարդը միջից հինգ կտոր է դառնում ապացուցանելու, որ ինքը վրացիների ամենամտերիկ բարեկամն է, բայց նրան ասում են. «հեռու»։ Մարդը էլ գեղեցիկ խօսք, էլ սիրուն ու զարդարուն տիտղոս չէ մնում, որ չը նուիրէ վրացիներին, բայց դրանով միայն ատելութիւն է յարուցանում վրացիների մէջ։ Ինչու։ Որովհետեւ վրաց հասարակութիւնը հասկանում է, որ ամբողջովին թունաւորված է այն ծաղկեփունջը, որ մատուցանում է նրան վրաց ազգի անկոչ սիրահարը։ Ահա ինչ պատասխան է տալիս վրաց «Ցնօբիս Փուրցելի» լրագիրը Վէլիչկոի այդ յօդուածներին.

Մեր «բարեկամ» Վ. Վէլիչկո էլի մի անգամ նայեց մեզ վրա քաղցր աչքով։ «Новое Время» լրագրի մէջ տպված են նրա երկու յօդուածները մեր պատմութեան եւ կուլտուրայի մասին։ Ինչպէս վայել է «հին եւ փորձված բարեկամին», նա մատուցանում է մեզ շաքարով համեմած պիլիւներ.—վրացիները ազնուաբարոյ եւ դիւցազն են, բոլորովին նման չեն մատերիալիստ-հայերին, եւ այլ այսպիսի բաներ։ Թողնենք այս կոմպլիմենտները,—սրանք թող խելքահան անեն մեր «մազերը սպիտակած ինտիտուտականներին», որոնք իսկոյն կը սիրեն ամեն մէկին, ով վրացուն կանուանէ ասպետ եւ կը պախարակէ հային։ Մեզ համար աւելի հետաքրքրական են պ. Վէլիչկոի դատողութիւնները մեր յետամնացութեան պատճառների մասին եւ այն միջոցների մասին, որոնք կարելի են դարձնում մեր վերածնութիւնը. այս կողմից պ. Վէլիչկոի գրուածքների մէջ կան հետաքրքիր նմուշներ։

Եթէ ուշադրութեամբ դիտենք վրաց կեանքը, ասում է Վէլիչկոն, պարզ կը տեսնենք այս ժողովրդի բարոյական եւ նիւթական անկումը։ Սրա պատճառները շատ են։ Առաջին պատճառն այն է, որ պատերազմները դադարել են եւ խաղաղ կեանքն է տիրում. վրացիները, հաւատացնում է Վէլիչկոն ընթերցողին, պատերազմի մէջ էին դանում այժը, իսկ երկարատեւ խաղաղութիւնը նրանց համար վնասակար է. պատերազմը մատակարարում էր վրացուն կրօնական զգացմունք... Ուրեմն մեր «բարեկամի» առաջին եզրակացութիւնը հետեւեալն է. վրացին պատերազմով էր կենդանի, իսկ խաղաղ կեանքի համար նա թոյլ է եւ անպէտք... Սա դեռ ոչինչ. աւելի նշանաւոր է մեր յետամնացութեան երկրորդ պատճառը. բանից երեւում է, որ ամեն բան փչացրել են վաթսունական թուականների ռէֆորմները։ Ահա ինչ է գրում պ. Վէլիչկոն. «վաթսունական թուականների մեծ ռեֆորմները սկզբունքով մացրին վրաց կեանքի մէջ արտաքին կենդանութիւն, բայց մի եւ նոյն ժամանակ խորը եւ վնասակար ազդեցութիւն ունեցան նրանց ներքին կենցաղավարութեան վրա. բարձր դասակարգը շուտով ընկաւ եւ կանգնեց կործանման ճանապարհի վրա, իսկ ամբոխը անհովիւ հօտի նմանվեց»։ Եթէ ճորտերի ազատութիւնը, Վէլիչկոի կարծիքով, մեզ այսքան վնասեց, ուրիշ ռեֆորմները ինչ օգուտ կը տային։ Եւ իսկապէս, Վէլիչկոի քարոզից դուրս է գալիս, որ նոր ժամանակի բոլոր հաստատութիւնները մեզ միայն վնասեցին...

Երկար որոնելուց յետոյ Վէլիչկոն գտել է միայն մի հիմնարկութիւն, որը մեզ օգուտ բերեց—Վօրոնցովի ժամանակ բատալիոնների եւ գնդերի մէջ հիմնած զինուորական ուսումնարանները։

Վ. Վէլիչկոի միւս եզրակացութիւնները թողնում ենք, մանաւանդ որ նա դեռ չէ վերջացրել իր յօդուածները. այս էլ պէտք է խոստովանենք, որ մի նոր բան չը գտանք նրանց մէջ. մի եւ նոյն քաղցր խօսքերը եւ մի եւ նոյն դառն եզրակացութիւնը.—վրացիները ազնուատոհմ եւ հաւակրելի ժողովուրդ են, բայց եւրոպական քաղաքակրթութիւնը, կուլտուրան նրանց համար կործանիչ է.—այսպէս է խօսում Վէլիչկոն։

Նոյնն էին ասում եւ այսօր էլ կրկնում են զանազան օտարերկրացի ճանապարհորդ ուսումնասիրողները, երբ գրում են վայրենի ցեղերի եւ եւրոպականութեան մասին...

Այո, պ. Վէլիչկոի նման «բարեկամներ» ունենալն էլ մի դժբախտութիւն է։

ՆԱՄԱԿ ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ

Սեպտեմբերի 6-ին

Վեց տարի սրանից առաջ, կոմս Դելիանովի կինը, հետեւելով իր նախնիքների՝ Լազարեանների, սովորութեան, իր մահից առաջ 40,000 բուբլի նուիրեց Պետերբուրգի հայոց եկեղեցիներին, այն պայմանով, որ հայոց գերեզմանատան եկեղեցապատկան հողի վրա կառուցվի մի տուն եւ անուանվի «Դելեանեան անկեւանոց», ուր պիտի պահվեն 6 հոգի զառամեալ կամ աշխատանքին անընդունակ հայեր։

Ի՞նչ էր մնում անել եկեղեցական խորհուրդին։ Անշուշտ ընդունել, ժառանգներին շնորհակալութիւն յայտնել եւ հանդուցեալի յիշատակին հանդիսաւոր հոգեհանգիստ կատարել։

Խորհուրդը այդ չարեց։ Խորհուրդը մերժեց այդ նուէրը, հեգնելով, որ նուիրված գումարը քիչ է։ Կոմսուհու կտակակատար իշխան Սիմէոն Աբամելիք-Լազարեան, վիրաւորվելով այդ հեգնութիւնից, երեք ամիս ժամանակ տուեց խորհրդին՝ այդ նուէրը ընդունելու եւ ճշդութեամբ կատարելու համար, հակառակ դէպքում նա ինքը կարող է իր հայեցողութեամբ կարգադրել, կտակի զօրութեան համաձայն։

Այդ գումարը մինչեւ այժմ իշխանի մօտ է

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՑՈՒՑԱՀԱՆԴԷՍԸ

X

Ցուցահանդէսի գլխաւոր մուտքից դէպի ձախ կայ մի լայնարձակ պավիլիոն, որի ճակատին խոշոր տառերով արձանագրված է «Кавказскій учебный округъ» (Կովկասեան ուսումնարանական շրջան)։ Դա ցուցահանդէսի մանկավարժական բաժինն է, որ պիտի պատկերացնէ մեր երկրի կրթական գործը, մեր մատաղ սերնդի դաստիարակութեան որակն ու աստիճանը։

Մտնում էք ներս եւ ձեր աչքի առաջ պատկերանում է մի խառնիճաղանճ տեսարան։ Պատերի վրա դասաւորված են բազմազան պատկերներ, լուսանկարներ, ու ձեռագործի տեսակ-տեսակ նմուշներ։ Բացի դրանից մէջտեղում երկու շարք շարված են յատուկ սեղաններ ու պատնէշներ, իսկ դրանց վրա թափված են տետրակներ, ալբոմներ, գրքեր եւ աշակերտական աշխատանքների զանազան օրինակներ ու հաւաքածուներ։ Դիտում էք այդ բոլորը, կարդում էք տեղ-տեղ աչքի ընկնող վերնագրերը—(«Գանձակի դիրեկցիա», «Թիֆլիսի դիրեկցիա», «Առաջին գիմնազիա» եւ այլն եւ այլն)—աշխատում էք մի ամփոփ գաղափար կազմել Կովկասի դպրոցական գործի մասին, ուզում էք ընդհանուր եզրակացութիւն դուրս բերել այդ ամբողջ բաժնի մասին,—բայց իզուր... Չը կան ոչ ցուցակներ, ոչ վիճակագրական տեղեկութիւններ եւ ոչ էլ դիագրամներ։

Այդպիսի պայմաններում ձեզ մնում է մի առ մի զննել իւրաքանչիւր դպրոցի ցուցադրած իրերը, բոլորովին մասնաւոր աղբիւրներից հաւաքել ձեզ հետաքրքրող տեղեկութիւնները եւ դուրս բերել այս կամ այն եզրակացութիւնը։

Այդ բաժնում մասնակցել են թէ տարրական եւ թէ միջնակարգ, թէ արական եւ թէ իգական դպրոցները։ Տարրական դպրոցների ցուցադրած առարկաները բաժանված են որոշ սիստեմի—իրանց դիրեկցիաների համապատասխան։ Իսկ միջնակարգ դպրոցներից իւրաքանչիւրն ունի իր յատուկ բաժինը։ Իրանց ցուցադրած առարկաների որակով, քանակով ու դասաւորութեամբ առաջնակարգ տեղ են բռնում Թիֆլիսի ուսուցչական ինստիտուտը եւ Գօրիի ուսուցչական սեմինարիան։ Առաջինը ի ցոյց է դրել՝ աշակերտների գրաւոր աշխատութիւնները ռուսաց լեզուից, մաթեմատիկայից, փորձնական դասերից, նրկարչութիւնից եւ արհեստներից, Թիֆլիսի շրջակայքում վայրի աճող բոյսերի գերբարիին, լուսանկարչական պատկերներ, յատակագծեր եւ այլն։

Ուսուցչական ինստիտուտը իր տեսակի միակ դպրոցն է ամբողջ Կովկասում եւ պատրաստում է ուսուցիչներ յատկապէս քաղաքային դպրոցների համար։ Նա գոյութիւն ունի 1872 թուից սկսած եւ մինչեւ օրս տուել է ընդամենը 425 ուսուցիչներ, *) որոնցից 214—(50%)-ը ռուսներ են, 121—(25%) վրացիներ, 54—(13%) հայեր, 10 թուրք, 10-ը լեռնականներ եւ 16-ը զանազան ազգութիւններից։ Ներկայումս այդ դպրոցում սովորում են 93 աշակերտ, որոնցից 64-ը ռուսներ են, 24-ը վրացիներ, 4-ը հայեր եւ 1 գերմանացի։

*) Տե՛ս „Александровскій учительскій институтъ въ Тифлисѣ“ բրոշիւրը։

Դպրոցի վրա ծախսվում է տարեկան 35,720 բուբլի, որից 28,910 ր. պետական գանձարանն է տալիս։

Գօրիի ուսուցչական սեմինարիան ցուցադրել է բազմաթիւ տետրակներ, ալբոմներ ու հաւաքածուներ աշակերտական աշխատութիւններից եւ բազմազան նմուշներ դպրոցի մետաքսագործութիւնից, արհեստագործութիւնից (ручной трудъ), բուսականութիւնից եւ այլն։

Միւս միջնակարգ դպրոցներից մի քանիսն էլ ունեն իրանց յատուկ բաժինները, բայց այնպէս հարուստ ու հետաքրքիր չեն, ինչպէս վերոյիշեալները։

Գալով տարրական դպրոցներին, պէտք է նկատել, որ ամենահարուստն ու բազմակողմանին կարելի է համարել Գանձակի դիրեկցիայի բաժինը, թէեւ միւսներն էլ պակաս հետաքրքրաշարժ չեն։ Դրանց բոլոր էքսպոնատները ներկայացնում են աշակերտական տետրակներ, նկարչական ալբոմներ, քարտէզներ, ձեռագործի նմուշներ, լուսանկարչական պատկերներ, յատակագծեր եւ այլն։ Զափազանց հարուստ ու բազմակողմանի են յատկապէս ձեռագործի եւ կար ու ձեւի նմուշները, որոնց մէջ առանձին ուշադրութիւն է

մնում եւ մօտ 50,000 ռուբլի է դարձել իր տոկոսներով։

Այս տարի, եկեղեցական խորհուրդը մի շքեղ շինութիւն է շինում գերեզմանատան եկեղեցուն կից, եկեղեցական գումարով, որ նստում է 32,000 ռուբլի։ Այդ տունը սեպտեմբերի վերջերին պատրաստ կը լինի։ Շատ լաւ կանէին այժմեան եկեղեցական խորհրդի անդամները, եթէ իրանց նախորդների սխալը իրանք ուղղէին ու պատրաստի տունը, որ շատ յարմար է անկելանոցի համար, առաջարկէին իշխանին մի եւ նոյն նպատակի համար, իսկ վերոյիշեալ 50,000 ռուբլու տոկոսներով զառամեալներին խնամէին։

Այժմ էլ եկեղեցական փողերով խնամվում են 5 հոգի զառամեալ ծերունիներ, որոնց վրա տարեկան 1,200 ռուբլի է ծախսվում, բացի բնակարանից։

Անցեալ տարի, իշխանուհի Աբամելիք-Լազարեան, Մոսկվայում, հայոց եկեղեցուն կից եւ Լազարեան ճեմարանի դիմաց, հինգ յարկանի մի մեծ տուն շինեց, որ 950,000 ռուբլի է նստել։ Լուրեր են պատում, թէ իշխանուհին մտադիր է այդ տունը Մոսկվայի հայոց եկեղեցուն նուիրել։

Իշխանուհին ուզում է, որ Մոսկվայի եկեղեցին էլ ապահով դրութեան մէջ գտնվի, որ կարողանայ իր թոշակաւորներն ունենալ Լազարեան ճեմարանում չքաւոր հայ ընտանիքների զաւակներից։ Լազարեանների տոհմը, հայկական մայր հորիզոնի վրա, միշտ լուսատու աստղ է եղել իր լուսաւոր, բարի եւ մարդասիրական գործերով։ Թող իշխանուհին էլ մի եւ նոյն չաւղով գնայ։

Դիտող

ՆԱՄԱԿ ԴԵՐԲԵՆՏԻՑ

—

Սեպտեմբերի 7-ին

Ինչպէս յայտնի է, Դերբենտը հարուստ է իր այգիներով։ Այգիների մեծամասնութիւնը տարածվում է քաղաքից դէպի հարաւ, կասպեան ծովի եզերքով, մօտաւորապէս 9 վերստ երկարութեամբ։ Դէպի հիւսիս գտնվում են մի քանի տասնեակ դեսեատին այգիներ։ Արեւմուտքից շրջապատված է լեռներով, իսկ արեւելքից սահմանափակում է ծովը։

Մեծ այգետէրերը գլխաւորապէս հայեր են, իսկ Թուրքեր եւ Հրէաներ աւելի երկրորդական դեր են խաղում տեղային գինեգործութեան մէջ։ Ռուս այգետերերից յայտնի է Կոչերգին, որ նոյնպէս միակն է, որ իր գինիները ծախում է աւելի բարձր գներով եւ իր սեփական ֆիրմայով։ Մնացածները, չը նայած որ տասնեակ դեսեատիններով այգիներ ունեն, ծախում են գինի, իբրեւ չիրա, վեդրոն 70—80 կոպէկով, կամ հազիւ հազ պահելով մինչեւ գարուն, ծախում են 1 ռուբլի—1 ր. 20 կոպ. վեդրոն։

Տեղային գինիների թնդութիւնը 10° աւելի չէ անցնում, իսկ հասարակ գինիների թնդութիւնը, մանաւանդ հրէաների այգիներից, լինում է 8°—9°։ Հրէաների այգիները բաղկացած են համարեա թէ միմիայն երկու տեսակ խաղողից—«կայթաղի» եւ «նարմա», որոնք չատ մեծ բերք են տալիս—(500—600 վեդրո մի դեսեատինից), բայց չատ թոյլ գինի է լինում։

Այս տարվայ բերքը կարելի է միջակից պակաս հաշուել։ Մի դեսեատին այգին, լաւ տեսակի խաղողից բաղկացած, տուել է մօտ 150—200 վեդրո։ Հաշուելով ամբողջ Դերբենտի շրջակայքում 3,200 դեսեատին, կը ստանանք մօտ 480,000—640,000 վեդրո գինի։

Տեղային ամենալաւ տեսակները հաշուում են «խաթմի» եւ «գիլքարի» (սպիտակներից) եւ «ղղլարի» ու «ղիմրի» (կարմիրներից)։ Կան նոյնպէս եւ եւրոպական տեսակի խաղողներ, ինչպէս են—պինօ, կաբերնէ, մուսկատ, բորդօ, նոյնպէս կախէթի սափերավի, բայց միայն մի քանի հարուստների այգիներում։ Այս տարի չատ շուտ հասաւ խաղողը, այնպէս որ օգոստոսի 25-ից արդէն սկսեցին այգիները քաղել եւ մինչեւ սեպտեմբերի 20-ը արդէն ամեն տեղ վերջացրած կը լինեն։

Տեղային գինու ցած գներից ազատվելու համար արդէն մի քանի տարի է այգէտէրերը աշխատում են մի ընկերութիւն կազմել, որ կարողանան հաւաքական ոյժերով իրանց գինիները աւելի երկար պահել, մի լաւ գինեգործի հսկողութեան տակ, եւ ծախել աւելի բարձր գներով։

Մեր կողմից խորհուրդ կը տայինք տեղային այգէտէրերին նոյնպէս աւելի բազմացնել դեսերտի տեսակները—«ռիշբաա» եւ «աղադայի», որոնց մեծ պահանջ կայ, եւ այս բոպէին Մոսկվայում եւ Պետերբուրգում պուդը ծախվում է 4 ր. 50 կ.—5 ռուբլի։

Սունկային հիւանդութիւները այս տարի համարեա թէ ոչ մի վնաս չը տուին այգիներին, իսկ մի քանի այգիներ վարակված են Doctylopius longispinus (виноградный червецъ) ճիճուով, որի դէմ միւս գարնանից միջոցներ ձեռք կառնվեն։

Ս. Բաշինջաղեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Թիֆլիսում տեղեկութիւն է ստացված, որ Վեհափառ Կաթողիկոսը սեպտեմբերի 20-ին կամ 21-ին կը ժամանէ Թիֆլիս։

—

Երէկ, ուրբաթ, սեպտեմբերի 14-ին, տեղի ունեցաւ Թիֆլիսի ժամուլի ներկայացուցիչների նիստը, որ զումարված էր վերջնականապէս խմբագրելու այն ծրագիրը, որ մշակված էր նախկին նիստում ժամուլի ներկայացուցիչների ժողովի համար։ Այդ ծրագիրը կուղարկվի Գիւղատնտեսական ընկերութեան խորհրդին, որը նրան քննելուց յետոյ կուղարկէ պաշտաւորապէս իշխանութեան հաստատութիւնը ստանալու համար։ Ժողովը պէտք է կայանայ հոկտեմբեր ամսին։ Մասնակցել կարող են կովկասեան ժամուլի ներկայացուցիչները եւ գրականագէտները։

—

«Մուրճ» ամսագրի հրատարակիչ Կոնստանդին Կրասիլնիկեան հաստատված է այդ ամսագրի խմբագրի պաշտօնի մէջ։

—

«Кавказскій Вѣстникъ» ամսագրի խմբագիր հաստատված է նրա հրատարակիչ Վ. Ի. Կորգանով։

—

Մեզ հաղորդում են, որ Թիֆլիսի նախկին առաջնորդ Սուրէնեան Գէորգ արքեպիսկոպոսը տեղափոխվեց առաջնորդարանից իր եղբօր տունը, ուր եւ ապրելու է։ Ինչպէս յայտնի է, Սուրէնեան արքեպիսկոպոսին կաթողիկոսական կօնդակով առաջարկված էր գնալ Էջմիածին։

—

Ցուցահանդէսի կոմիսարիատում եղած տեղեկութիւններով՝ ցուցահանդէսի բացման օրից մինչեւ սեպտեմբերի 12-ը՝ այցելուների թիւը եղել է մօտ 36,000։ Չը նայելով որ սեպտեմբերի 12-ին, 13-ին եւ 14-ին անձրեւային օրեր էին, այսուամենայնիւ ցուցահանդէսն այցելել են օրական մօտ 600 հոգի, չը հաշուելով ձրիաբար այցելողներին։

—

Ցուցահանդէսի բացումից մինչեւ սեպտեմբերի 12-ը ցուցահանդէսի վարչութիւնը ստացել է վաճառված առարկաներից, որպէս 10 եւ 5% տուրք, 167 ր. 18 կոպէկ։

—

Բժշկապետ Ց. Գասպարեանց վերադարձաւ արտասահմանից եւ սկսել է ընդունել հիւանդներին։

—

Լսում ենք, որ Թաւրիզի եւ Ատրպատականի Հայուհեաց բարեգործական ընկերութիւնները միացել են «Թաւրիզի հայուհեաց միացեալ ընկերութիւն» անունով։

—

Ներկայումս հարց է յարուցված գեղարուեստական միջնակարգ դպրոցներ բանալու մասին Կիեւ, Վարշավա եւ Թիֆլիս քաղաքներում հանրակրթական այնպիսի դասընթացքով, որ հաւասար լինի միջնակարգ դպրոցների դասընթացքին։ Այդ դպրոցները. Торг.-Пром. Газета» լրագրի խօսքով, կը գտնվեն Կայսերական Գեղարուեստական Ակադէմիայի վարչութեան տակ, որը որոշ սուբսիդիա կը տայ Կիեւում եւ Թիֆլիսում դպրոցներ պահելու համար։ Վարշավայի դպրոցը հիմնվում է տեղական լեհացի ազնուականութեան ներկայացուցիչների միջոցներով։

—

«Իվերիա» լրագրի ասելով, առաջիկայ յօբելեանական տօներին ներկայ լինելու համար Պետերբուրգից Թիֆլիս կը գայ սինոդի օբերպրոկուրօրի օգնական Սաբլէր։

—

Թիֆլիսի քաղաքային խորհրդի այն ժամանաժողովի վերջին նիստում, որ զբաղված է ծրագիր մշակելով առաջիկայ յօբելեանական տօների համար, վճռվեց հրախաղութիւն սարքել ոչ ս. Դաւթի սարի վրա, ինչպէս որոշված էր առաջ, այլ Սօլոլակի կամ Արսենալի սարերի վրա։ Այս երկու տեղերից մէկն ու մէկի ընտրութիւնը յանձնվեց քաղաքային ինժենէր Էնֆիաճեանցին եւ առեւտրական-արդիւնաբերական աւագ վերահսկող Ալիխանեանցին։

—

Հրդեհներից գիւղական ազգաբնակութեան հանող ձիաները նուազեցնելու նպատակով, երկրագործութեան եւ պետական կալուածների մինիստրը հրամայեց կազմել այս աշնան ընթացքում առանձին խորհրդակցութիւններ, որոնք պէտք է մշակեն այն հարցը, թէ ինչ միջոցներ պէտք է ձեռք առնել, որ գիւղերում սկսեն ձիեր չինել կրակին դիմադրող առարկաներից։

—

Մայրաքաղաքական հրապարակախօս Լէվիցկի միջնորդութիւն էր յարուցել կառավարութեան առաջ եւ թոյլատրութիւն էր խնդրել մայրաքաղաքական լեզուով թերթ հրատարակել Կիեւում։ Այժմ ռուս լրագիրները հաղորդում են, որ Լէվիցկու այդ խնդիրքը մերժված է կառավարութեան կողմից։

—

Մոսկվայի քաղաքի միջոցներից 13 հազար ռուբլի տալ Ռուսաստանի հետ Վրաստանի միացման 100-ամեակի յօբելեանի տօների համար։

—

«Կ. Լ. Ռիկկեր» գրավաճառական ֆիրմային թոյլ է տուած հրատարակել Պետերբուրգում, առանց նախնական գրաքննութեան, Օդէսայի համալսարանի պրոֆէսօր Պոդվիսօցկու եւ բժիշկ Վլադիսլավլեվի խմբագրութեամբ մի բժշկական չաբաթաթերթ «Русскій Врачъ» անունով։ Այս թերթը հիմնվում է ի յիշատակ Վ. Մ. Մանասէինի եւ իբրեւ շարունակութիւն նրա «Врачъ» ամսագրի։

—

ԿԱՂԶՈՒԱՆԻՑ մեզ գրում են. «Կաղզուանում չը տեսնված բան էր սեպտեմբերի 5-ին գիշերը պատահած անապատելի հրդեհը Ղազարեան եղբայրների մագազինում։ Կաղզուանում տների եւ խանութների պատերը միշտ կառուցանում են հում աղիւսից. այդ մագազինի պատերը նոյնպէս այդ աղիւսից էին։ Գիշերը ետեւի պատից բացում են մի անցք ու մտնելով մագազինը, մետաքսէ կտորները դարսում են մագազինի մէջտեղը, նաւթ ածում ու հրդեհում։ Գիշերվայ ժամի 4-ին պահապանները, տեսնելով որ մուխ է դուրս գալիս մագազինի դռներից, իսկոյն եւ եթ յայտնում են Ղազարեանցներին, որոնք մի կերպ հրդեհը հանգցնում են, բայց ապրանքի մեծ մասը արդէն այրված էր։ Այդ հրդեհի մասին ոչ մի մարդու վրա կասկած չէին յայտնում։ Երեք օր անցած, Ղազարեանցների մագազինից ոչ հեռու սպանում են գիշերը մի միայնակ հայ մարդու իր տան մէջ։ Լսում է, որ այդ սպանված մարդը խոստացած է եղել յայտնել Ղազարեանցների մագազինը հրդեհող մարդկանց անունը։ Սպանութիւնը կատարված է դաշոյնի ինն հարուածով»։

—

ՂՈՒԲԱՑԻՑ մեզ գրում են. «Ղուբայի կալուածատէր պ. Շագիդանեանց ուղարկել է ցուցահանդէս ձիեր զանազան ցեղերի, ի միջի այլոց եւ մի նշանաւոր ձի՝ «Մինիստր» անունով, որը նա գնել է Պետերբուրգում երեսուն եւ երկու հազար ռուբլով»։

—

ՇՆՈՂ գիւղից (Բօրչալուի գաւառ) մեզ գրում են. «Կալերը մեզանում արդէն վերջացել են։ Բերքը ընդհանրապէս անբաւարար է, ուստի զգացվում է հացի պակասութիւն։ Կարսի երկաթուղին դիւրութիւն է տալիս գիւղացիներին անտառից հաւաքած եւ այդիներում գտնվող մրգերը փոխադրել Ալէքսանդրօպոլի շրջակայ գիւղերը եւ փոխել հացի հետ, որով եւ մի քանիսին աջողվել է սպառնացող սովից կիսով չափ ազատել իր ընտանիքը։ Նման միջոցներով գուցէ կարելի լինի ուտելու պաչարի կարիքը մեղմացնել, սակայն դժուարը սերմացուն է, որի ցանելու ժամանակը արդէն եկել է, իսկ նրանից հետարեա զուրկ է մեծամասնութիւնը։ Երկար ժամանակ է անձրեւի երես չենք տեսել, ուստի հողի սաստիկ չորութեան պատճառով գիւղացիք չեն վստահանում ձեռնամուխ լինել աշնանավարին։ Չը նայելով ձեռք առնված բոլոր միջոցներին, այստեղ գողութիւնները դարձեալ սկսվել են։ Առաջ կարելի էր լինում գողացված ապրանքը գոնէ փողով յետ ստանալ, իսկ այժմեան սիստեմի գողերը մեզ այդ բաղդից էլ զրկեցին եւ գողացածը անհետ կորցնում են, զրկելով խեղճ ռաչպարին իր թեւ ու թիկունք լծկանից»։

գրաւում Մեծ-Արխվալի գիւղի «Տէր-Մկրտչեան դպրոցի» ցուցադրած գեղանկար գործը, որ պատրաստված է օր. Տէր-Մկրտչեանի վերահսկողութեամբ։

XI

Եթէ ուզում էք Կովկասի դպրոցական գործի մասին մի ընդհանուր գաղափար կազմել, եթէ ձեզ հարկաւոր ցանկալի է գոնէ թռուցիկ կերպով պատկերացնել, թէ Կովկասում ընդհանրապէս ինչ ձեւի եւ ինչ սիստեմի դպրոցներ գոյութիւն ունեն, այն ժամանակ վերոյիշեալ բաժնից յետոյ անմիջապէս պիտի մտնէք ցուցահանդէսի գլխաւոր պավիլիոնը եւ կանգ առնէք «Մանկավարժական արհեստագիտութիւն» կոչվող բաժնում։

Այդտեղ մասնակցել են գրեթէ բոլոր արհեստագործական դպրոցները, որոնցից ամենաաչքի ընկնողներն են։

1) Սամցխեթի գիւղատնտեսական տարրական դպրոցը, որ ցուցադրել է մրգեղէնի ու բանջարեղէնի բազմաթիւ տեսակներ։ Դրանց մէջ առանձնապէս ուշադրաւ են «Кальвиль» անունով խնձորները եւ «Катильякъ» տանձերն իրանց մեծութեամբ։ Բացի դրանցից կան նաեւ մի շարք լուսանկարչական պատկերներ, որ ներկայացնում են դպրոցի զանազան մասերը, աշակերտներն ու նրանց պարապմունքները։

2) Գանձակի «Միքայէլեան արհեստագործական դպրոցի» բաժինը չափազանց հարուստ ու բազմակողմանի է։ Նա իր մէջ պարունակում է բազմազան նմուշներ շերամապահութիւնից, այգեգործութիւնից, ատաղձագործութիւնից, պողպատագործութիւնից եւ այլն։ Արժէ մի առ մի գննել այդ իրերը։

3) Վլադիկավկազի «Լօրիս-Մելիքեան արհեստագործական դպրոցը» ցուցադրել է բազմաթիւ աշակերտական տետրակներ ու առանձին նկարներ եւ փայտից ու պողպատից չինած իրեր։ Այդ դպրոցը մեր երկրի ամենահին դպրոցներից մէկն է, որ գոյութիւն է ունեցել 32 տարի եւ այդ ժամանակաշրջանում պատրաստել է 228 վարպետներ—այն է 135 պողպատագործ, 17 դարբին, 75 ատաղձագործ եւ 1 ձուլող։ Ներկայումս այդ դպրոցում սովորում են ընդամենը 100 աշակերտ, որոնցից 67 ռուսներ են, 3 վրացի, 1 հայ, 5 լեհացի եւ 24 լեռնականներ։ Դպրոցն իր բարեկարգ վիճակով մեծ հռչակ է վայելում ամբողջ շրջակայքում...

4) Ախալցխայի «Քաղաքային դպրոցը» ցուցադրել է իր աշակերտների պատրաստած իրերը փայտից ու պողպատից։ Դրանց մէջ աչքի են ընկնում գրասեղանը, փայտէ մեքենաները եւ կաւից ու կարդօնից չինած քարտէզները, որոնցից միայն Հիւսիսային Ամերիկան քիչ ճաեւ է...

5) Բաթումի «Արհեստագործական դպրոցի» բաժինը ուշագրաւ է ոչ այնքան իր ցուցադրած պատրաստի իրերով (լուսանկարչական տեսարաններ, թաւշի ու մետաքսի նմուշներ, պողպատէ առարկաներ եւ այլն), որքան իր երկու մեքենաներով, որոնցից մէկը մետաքս է գործում, իսկ միւսը թաւիշ։

Պէտք է նկատել, որ այդ դպրոցի վարչութիւնը աւելի մեծ հետաքրքրութիւն շարժած կը լինէր, եթէ մեքենաների հետ միասին ի ցոյց դնէր նաեւ մի քանի վիճակագրական տեղեկութիւններ, թէ դպրոցում տարեկան որքան թաւիշ ու մետաքս է պատրաստվում եւ այդ գործուածքները ինչ չափով կարողանում են մրցել մեծ գործարանների արտադրութիւնների հետ։

Մոսկվայի քաղաքի միջոցներից 13 հազար ռուբլի տալ Ռուսաստանի հետ Վրաստանի միացման 100-ամեակի յօբելեանի տօների համար։

—

«Կ. Լ. Ռիկկեր» գրավաճառական ֆիրմային թոյլ է տուած հրատարակել Պետերբուրգում, առանց նախնական գրաքննութեան, Օդէսայի համալսարանի պրոֆէսօր Պոդվիսօցկու եւ բժիշկ Վլադիսլավլեվի խմբագրութեամբ մի բժշկական չաբաթաթերթ «Русскій Врачъ» անունով։ Այս թերթը հիմնվում է ի յիշատակ Վ. Մ. Մանասէինի եւ իբրեւ շարունակութիւն նրա «Врачъ» ամսագրի։

—

ԿԱՂԶՈՒԱՆԻՑ մեզ գրում են. «Կաղզուանում չը տեսնված բան էր սեպտեմբերի 5-ին գիշերը պատահած անապատելի հրդեհը Ղազարեան եղբայրների մագազինում։ Կաղզուանում տների եւ խանութների պատերը միշտ կառուցանում են հում աղիւսից. այդ մագազինի պատերը նոյնպէս այդ աղիւսից էին։ Գիշերը ետեւի պատից բացում են մի անցք ու մտնելով մագազինը, մետաքսէ կտորները դարսում են մագազինի մէջտեղը, նաւթ ածում ու հրդեհում։ Գիշերվայ ժամի 4-ին պահապանները, տեսնելով որ մուխ է դուրս գալիս մագազինի դռներից, իսկոյն եւ եթ յայտնում են Ղազարեանցներին, որոնք մի կերպ հրդեհը հանգցնում են, բայց ապրանքի մեծ մասը արդէն այրված էր։ Այդ հրդեհի մասին ոչ մի մարդու վրա կասկած չէին յայտնում։ Երեք օր անցած, Ղազարեանցների մագազինից ոչ հեռու սպանում են գիշերը մի միայնակ հայ մարդու իր տան մէջ։ Լսում է, որ այդ սպանված մարդը խոստացած է եղել յայտնել Ղազարեանցների մագազինը հրդեհող մարդկանց անունը։ Սպանութիւնը կատարված է դաշոյնի ինն հարուածով»։

—

ՂՈՒԲԱՑԻՑ մեզ գրում են. «Ղուբայի կալուածատէր պ. Շագիդանեանց ուղարկել է ցուցահանդէս ձիեր զանազան ցեղերի, ի միջի այլոց եւ մի նշանաւոր ձի՝ «Մինիստր» անունով, որը նա գնել է Պետերբուրգում երեսուն եւ երկու հազար ռուբլով»։

—

ՇՆՈՂ գիւղից (Բօրչալուի գաւառ) մեզ գրում են. «Կալերը մեզանում արդէն վերջացել են։ Բերքը ընդհանրապէս անբաւարար է, ուստի զգացվում է հացի պակասութիւն։ Կարսի երկաթուղին դիւրութիւն է տալիս գիւղացիներին անտառից հաւաքած եւ այդիներում գտնվող մրգերը փոխադրել Ալէքսանդրօպոլի շրջակայ գիւղերը եւ փոխել հացի հետ, որով եւ մի քանիսին աջողվել է սպառնացող սովից կիսով չափ ազատել իր ընտանիքը։ Նման միջոցներով գուցէ կարելի լինի ուտելու պաչարի կարիքը մեղմացնել, սակայն դժուարը սերմացուն է, որի ցանելու ժամանակը արդէն եկել է, իսկ նրանից հետարեա զուրկ է մեծամասնութիւնը։ Երկար ժամանակ է անձրեւի երես չենք տեսել, ուստի հողի սաստիկ չորութեան պատճառով գիւղացիք չեն վստահանում ձեռնամուխ լինել աշնանավարին։ Չը նայելով ձեռք առնված բոլոր միջոցներին, այստեղ գողութիւնները դարձեալ սկսվել են։ Առաջ կարելի էր լինում գողացված ապրանքը գոնէ փողով յետ ստանալ, իսկ այժմեան սիստեմի գողերը մեզ այդ բաղդից էլ զրկեցին եւ գողացածը անհետ կորցնում են, զրկելով խեղճ ռաչպարին իր թեւ ու թիկունք լծկանից»։

6) Իշխանուհի Արղութեանի «Մանկական պարտէզ եւ պանսիոն»-ն էլ ցուցադրել է մի քանի իրեր, որոնց մէջ իրանց գեղեցկութեամբ ու նրբութեամբ աչքի են ընկնում «այրած փայտից» չինած կլօրիկ սեղանն ու երկու աթոռները։ Չափազանց բնական տեսք ունի կաւից չինած մինիատիւր երեխան, որ նստել է ձեռքերը ծնկների վրա դրած եւ մտածմունքների մէջ խորասուզված։

Բացի վերոյիշեալ դպրոցներից այս բաժնում զանազան էքսպօնատներ են ցուցադրել նաեւ Թիֆլիսի երկրագործական եւ երկաթուղային դպրոցները, Ստավրոպոլի, Եկատերինոդարի, Նովորոսիյսկի, Փոթիի, Բորժոմի, Զաքաթալի եւ Բագուի արհեստագործական դպրոցները, Ախալքալաքի քաղաքային դպրոցը, Թիֆլիսի «Ալմազովի կար ու ձեւի դպրոցը» եւ այլն։ Դրանց էքսպօնատները բաղկացած են աշակերտական տետրակներից, ձեռագործի նմուշներից եւ փայտից, երկաթից ու պողպատից չինած իրերից։

Ե. Թ.

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՖՐԱՆՍԻԱՑԻՑ

Պարիզ, սեպտեմբերի 6-ին

Նախորդ թղթակցութեամբ մը երկարօրէն բացատրած էի Ֆրանկո-Թիւրք վէճին շարժառիթները։ Ֆրանսական մամուլին լեզուէն դասելով, զգացնել տուած էի թէ խնդիրը խաղաղ կերպով լուծում պիտի գտնէ։ Արդարեւ, Թիւրքիան, որքան որ ալ իրեն կռնակ ունենայ եւրոպական պետութիւն մը, չի կրնար Ֆրանսայի տեղի չը տալ։ Միայն թէ բացի քանի մը թերթերէ, որոնց սրբազան պարտականութիւնն է դրամագլխատէրներու պաշտպան կանգնել, ֆրանսական լրագրութիւնը՝ իր ամբողջութեան մէջ, Թիւրքիոյ դէմ ուժգին միջոց գործադրելու կողմնակից չէ։

Այս անգամ ձեզի կը ներկայացնեմ պ. Կասանեակի կարծիքը։ Պ. Կասանեակ «Autorité» կայսերական թերթին խմբագիրն է։

«Ֆրանկո-Թիւրք վէճին հանգամանքէն այնպէս կերեւի, թէ հանրապետութեան կառավարութիւնը տրամադիր է նաւային ցոյց մը ընել Թիւրքական ջուրերուն մէջ, Ցարին մեկնումէն անմիջապէս յետոյ։

«Անտարակոյս, մենք ալ ոչ մէկ անպատեհութիւն կը տեսնենք, ոչ մէկ, այս պտոյտին, եթէ ան պէտք է մնայ սակայն պարզ պտոյտ, ու ասով միայն պիտի կրնանք սուլթանը ստիպել, որ իր պարտքերը վճարէ։

«Մենք պիտի աւելցնենք նոյն իսկ որ ոչ ոքին անհաճոյ պիտի ըլլար, եթէ յիշեալ սուլթանը ստորնացում մը կրէր։ Իրաւունք է հաստատել՝ այդպիսի ստորնացում մը Մեծ Մարդասպանին, այս զզուելի ու զազրելի (ignoble et immonde) վեհապետին, որուն ձեռքերը արիւնով կարմրած են։

«Իրաւցնէ ամօթ է, որ վատօրէն իր ապարանքին մէջ պահուրտող այս խողխողողին թոյլ տրուի՝ ինքզինքին քաղաքակիրթ հռչակող ազգերուն հետ դիւանագիտական յարաբերութիւններ մշակել։

«Շատոնց է, որ Եւրոպան պէտք է յետոյքին տքի հարուածով մը վերջին թուրքը Վոսֆորի խորերը ղրկէր ու այսպէս մաքրէր, լուսաւոր եւրոպական հողը այս կէղտէն (souillure), որ չափազանց տեւեց։

«Քրիստոնէութեան համար մշտատեւ անպատուութիւն մըն է Խաբերային մահիկը ս. Սոֆիայի վրա։

«Թող չարչրկեն ու հրհրեն սուլթանը որքան որ կարելի է. աշխարհին վրա մարդ չը պիտի դժգոհայ այդ բանին համար»։

Այս յառաջաբանէն յետոյ Ժէրսի պատգամաւորը, իբրեւ ազգայնական, իր պարտքը կը կատարէ յայտարարելով, որ սուլթանը պաշտպանողը Գերմանիան չէ, այլ Անգլիան. «Գերմանիան իսկ, ասիկա կը հաստատուի հետզհետէ, Գերմանիան իսկ մերժած է զինքը պաշտպանել մեզի դէմ։ Մենակ Անգլիան կերեւի, թէ սմսեղուկ կերպով կը քաջալերէ սուլթանը դիմադրել, մեզի գոհացում չը տալ»։

Ու «Օտորիտէի» խմբագիրը կաւելցնէ, թէ Ֆրանսան պէտք է զգոյշ շարժի, հակառակ ամէն կողմէ իրեն ուղղուած հրապարակական խրախուսանքներուն։

«Որովհետեւ կրնանք թակարդի մը մէջ իյնալ։ Նաւային ցոյցը պարզ տղայութիւն մըն է, եթէ sanction մը չը պիտի ունենայ։

«Ուզածնուս չափ կրնանք պտտել Պոլսոյ առջեւ 20-ի չափ նաւերով, ասիկա կարեւորութիւն անդամ չը պիտի ունենայ... եթէ երբէք թնդանօթները չը քաշենք։

«Արդ թնդանօթ քաշելը՝ պատերազմ հռչակել է։

«Գիտեմ նոյնպէս, որ խնդիր եղաւ Թիւրքիոյ այս կամ այն մասը գրաւելու։ Թիւրքիան նաւային ուժ չունենալով չը պիտի կրնայ պաշտպանել իր ո եւ է մէկ կղզին՝ Լէմնոսը, օրինակի համար, եթէ զայն գրաւենք։ Բայց այս գործողութիւնն ալ պատերազմ կը նշանակէ։ Ուրեմն պէտք է հանրային կարծիքին դիմել եւ հարցնել թէ պատերազմ կուզէ։ Չեմ կարծեր»։

Պ. Կասանեակ կըսէ, թէ Ֆրանսան Ֆաշոդայի խնդրին ատեն ապտակ կերաւ Անգլիայէն։ Հիմա, Թիւրքիան՝ տկար զօրութիւն մը՝ պէտք է որ իր առջեւ ցցուած տեսնէ հսկայ Ֆրանսան։ Չը պիտի ըսեն, թէ Ֆրանսան զօրաւորին առջեւ խոնարհեցաւ ու տկարին դիմացը միայն յոխորտալու քաջութիւնը ունի։ Ու կաւելցնէ. «Բայց վերջապէս պատճառ մը չէ որ միշտ տեղի տանք։ եթէ Անգլիոյ դէմ սրտոտ չը գտնուեցանք»։ Միայն թէ՝ որպէս զի Ֆրանսա սպառնական դիրք բռնէ Թիւրքիոյ դէմ բաւական արդարացուցիչ շարժառիթներ կան։ «Արդ չը կան, բաւական լուրջ շարժառիթներ չը կան խաղաղութենէ պատերազմի անցնելու, նաւատորմիղը շարժուն վիճակի մէջ դնելու համար։ Պոլսոյ քարափներու եւ չը վճարված առնելիքներու խնդիրները՝ բառին բուն իմաստով, ազգային խնդիրներ չեն ու չեն կրնար համարուիլ։ Անհատական խնդիրներ են, որոնց խորը իջնել թերեւս խոհեմութիւն չէ նոյն իսկ։ Որովհետեւ կրնայինք անոնց մէջ բաւական պղտոր բաներ գտնել։

«Առանց բողոքի ստուերի մը թոյլ տուինք, որ Թիւրքիան քրիստոնեայ արիւնը թափէ հեղեղի պէս, խողխողէ ամբողջ հասարակութիւնները. տակաւին այս պահուս, երբ ջարդերը կը շարունակուին, առանց երբէք մազի չափ յուզուելու՝ կը ձգենք Թիւրքիան իր քստմնելի քմահաճոյքին։ Նոյնպէս անայլայլ կը դիտենք, որ սուլթանը Բէյրութի եւ Երուսաղէմի կաթոլիկ միսիոնարներուն վրա՝ բռնաբարելով կապիտիւլասիոնի օրէնքները՝ նոր հարկեր դնէ. կը հանդուրժենք, որ անոնց դէմ խստութիւններ գործադրէ»։

Ու կայսերական պատգամաւորը կեղրակացնէ, թէ՝ «երբ մարդասիրական, քաղաքակրթական ու ֆրանսական ազդեցութեան պատուաւոր ու զօրեղ նկատողութիւններով Ֆրանսան տեղէն չը շարժեցաւ, իրաւունք չունի այդքան խստապահանջ ըլլալու դրամի ողորմելի ու աղտոտ խնդիրներու համար։

«Ֆրանսան՝ ոչ մէկ գնով չը պիտի ուզէ նաւային ցոյց մը, գրաւում մը, պատերազմ մը»։

Պ. Կասանեակի կարծիքը մէջտեղ բերի, որովհետեւ անիկա այս վէճին վրա գրուած առթիւ անհամար յօդուածներուն գրեթէ մէկ ամփոփումը կը ներկայացնէ։ Ֆրանսական մամուլը՝ մեծ մասով՝ կը հակառակի Թիւրքիոյ դէմ պատերազմի մը գաղափարին։ Նախ՝ որովհետեւ քանի մը վաշխառուներու առնելիքը ազգային խնդիր չեն. երկրորդ՝ աւելի յարմարագոյն առիթներու մէջ հանրապետութեան կառավարութիւնը իր մարդասիրական աւանդական դերին դրժեց։

Այսու հանդերձ ապագան անորոշ է։

Սուլթանը գլուխը կորանցուցած է։ Մէկ կողմէն կաթոլիկ միսիոնարներու դէմ այնպիսի միջոցներ ձեռք կառնէ, որոնք Ֆրանսան դրժգոհացնելու, գրգռելու հանգամանք ունին, միւս կողմէ կը ջանայ վէճի առարկայ եղող անհատական խնդիրները ոչ պաշտօնապէս կարգադրել։ Այսպէս հեռագիրները ծանուցին, թէ Դուռը ուղղակի բանակցութեան մտած է պ. Տիւբինիի հետ ու համաձայնութեան մը յանգած։

Այսօրուան լրագիրները Պոլսէն քաշուած հեռաւեալ հեռագիրը կը տային. «Ինչպէս ծանուցուած էր, սուլթանը երկար ունկնդրութիւն մը շնորհած է Միւնիր-պէյին։ Վեհապետն ու դեսպանը երկարօրէն խօսած են Ֆրանկո-Թիւրք վէճին վրա։ Այս ունկնդրութենէն յետոյ Տիւբինիի խնդիրը կարգադրուած է ու արդիւնքը պ. Բապատի հաղորդուած։ Լօրանդօ խնդիրը նմանապէս բանակցութեան առարկայ է, ու կը յուսացուի, որ քիչ օրէն ան ալ կարգադրուի։ Այս երկրորդ խնդիրն ալ լուծում գտնելէ անմիջապէս ետք, Թիւրք կառավարութիւնը պիտի դիմէ Ֆրանսական կառավարութեան զանոնք վաւերացնելու խնդրանքով»։

Այս իրիկուն «Թանը» կը հաղորդէր նոյնպէս սա լուրը. «Բ. Դուռը ամէն առիթ կը փնտռէ ըսելու համար, որ Ֆրանսայի հետ դիւանագիտական յարաբերութեանց խզում չը կայ։ Այսպէս, սուլթանը՝ կայսերազուն իշխանուհիներու ամուսնութեան ի պատիւ տրուած երեկոյթին հրաւիրած էր պ. Բապատը՝ Ֆրանսայի գործակատարը։ Պ. Բապատ չընդունեցաւ հրաւէրը։ Մեր Պոլսոյ թղթակիցը մեզի կը գրէ նմանապէս, որ Թիւրք կառավարութիւնը տեղակալ-գնդապետ մը նշանակած էր Ֆրանսական մեծ ռազմափորձերուն ներկայ գտնուելու համար. բայց մենք կը կարծենք թէ այս սպան առօք փառօք ճամբու պիտի դրուի Ֆրանսական կառավարութենէն»։

Սուլթանին ասիական, վրան բաց խորամանկութիւնները կը տեսնէք։ Ահաւասիկ ձեզի ուրիշ հեռագիր մըն ալ, որուն պերճախօսութիւնը ոչ մէկուն ուշադրութենէն չը պիտի վրիպի։

«Սուլթանը շատ անհանգիստ է Կոպէնհագէնի եւ Կիէլի մէջ տեղի ունեցած կայսերական հանդիպումներէն, ինչպէս նաեւ Ցարին պ. Լուբէի հետ ունենալիք տեսակցութենէն։ Սուլթանը գիտէ թէ Եւրոպային հաշիւները հատած է եւ թէ դեսպանները Թիւրքիոյ մէջ տիրող իրերու վիճակէն յոգնած են։ Պ. Զինովիէվ, Ռուսիոյ դեսպանը, Պարիզ կուղեւորի կոմս Լամզդորֆը տեսնելու համար»։

Արդարեւ այսօրուան «Թանը» կը ծանուցանէր, թէ պ. Զինովիեվ Պարիզ հասած է։

Այս ամէն դէպքերը բնական է, որ Եըլդըզ-Քիոսկի կամաւոր բանտարկեալին քունը փախցնեն։

Եւրոպական մամուլը միաձայն բողոքով արձանագրեց Մուշի եւ Սասունի մէջ կատարուած նոր խժդժութիւնները։ «Թանը» երկու օր առաջ այդ նիւթին նուիրուած խմբագրականով մը ուժգնօրէն բողոքելէ յետոյ սուլթանին բարբարոս քաղաքականութեան դէմ, Եւրոպան կը հրաւիրէ անյապաղ վերջ դնել իրերու այս աններելի կացութեան։ Այդ յօդուածին վրա դաղափար մը տալու համար, պէտք է ըսեմ, թէ քիչ անգամ «Թանը» այդքան զայրագին չեչտ դրած էր իր խմբագրականներուն մէջ։

Հայաստանի մէջ տեղի ունեցած վերջին ապրիլեան դէպքերը արձագանք պիտի գտնեն ֆրանսական խորհրդարանին մէջ բացումին օրն իսկ։ Պ. Տընի Քօշէն՝ արքայական պատգամաւորը, որուն հայասիրութիւնը ամենուն ծանօթ է, պ. Դելկասէին ուղղած նամակով մը կը յայտարարէ, թէ նպատակ ունի Ֆրանսայի արտաքին գործերու նախարարը հարցապնդել երկու կէտի վրա. 1) Սուլթանին կրօնական միաբանութիւններու դէմ ձեռք առած միջոցները։ 2) Մուշի եւ Սասունի նոր կոտորածները։

Տիգրան

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—«Մալիմաթ» լրագիրը հաղորդում է, թէ սուլթանի փեսայ, գեներալ-ադիւտանտ Ֆէրիդ փաշան, որ իբրեւ արտակարգ դեսպանութեան պարագլուխ, ուղարկված էր Իտալական եւ սպանական արքունիքները, յետ դարձաւ Կ. Պոլիս, բերելով իր հետ Իտալական եւ սպանական թագաւորների ինքնագիր նամակները, ուղարկված սուլթանին։

—«Moniteur Ottoman»-ի տեղեկութիւններով, Ֆէրիդ-փաշային նրա օգոստափառ անձը անձամբ պատուիրել էր, Եւրոպայում կատարելիք ճանապարհորդութեան ժամանակ, տեսնվել իր փեսայի, Մահմուդ-Դամատ փաշայի հետ եւ համոզել այդ «յամառ չերքէզին» վերադառնալու Կ. Պոլիս։ Այս նոյն Ֆէրիդ-փաշային յանձնարարված էր բաւարարութիւն տալ մի ուրիշ «ապատամբի», գեներալ Իզէտ-փաշային, որ ինքնակամ թողել էր Մադրիդի Թիւրքական դեսպանի պաշտօնը ոռճիկ չը ստանալու պատճառով։ Ինչպէս յայտնի է, Իզէտ-փաշան Պարիզի լրագիրներում մի քանի «բաց նամակներ» հրատարակեց՝ ուղղված սուլթանին, որոնց մէջ պատանում էր «չատ ցաւալի մերկացումներ» անել, եթէ սուլթանը չը բարձրէր նրա նիւթական դրութիւնը Եւրոպայում։ Գեներալ Իզէտ-փաշան, յայտնի մեծ վիզիր Ֆուատ-փաշայի թոռը, մի լաւ կրթված եւ եռանդոտ մարդ, ոչ պակաս անհանգստութիւն պատճառեց սուլթանին, քան Մահմուդ-Դամատ փաշան։ Վերջինը մինչեւ անդամ չը պատասխանեց իր քենակալ Ֆէրիդ-փաշայի նամակին, որ առաջարկում էր տեսակցել միմեանց հետ։ Բայց Իզէտ-փաշան, Ֆէրիդ-փաշայի հրաւէրը ստանալուն պէս, չատպեց Պարիզից ուղեւորվել Մադրիդ։ Ստանալով սուլթանի փեսայից մի արկղիկ ոսկի, իր պարքերը եւ Մադրիդի Թիւրքական դեսպանութեան պաշտօնեաների ոռճիկները վճարելու համար, Իզէտ-փաշան նորից ստանձնեց իր դեսպանական պաշտօնը Մադրիդում։ Այս հանդամանքը չատ ուրախացրեց սուլթանին եւ Կ. Պոլսի լրագիրներում, Մադրիդից ուղարկված թղթակցութիւնների մէջ, առանձնապէս չեչտվում էր այն «նշանաւոր եղելութիւնը», որ երբ սպանիական պատանի թագաւորը ընդունում էր Ֆէրիդ-փաշային, ընդունելութեան ներկայ էր եւ «սուլթանի արժանաւոր ներկայացուցիչ Իզէտ-փաշան»։

—«Rappel» լրագրին հեռագրում են Ա.թէնքից, թ'է Կ. Պոլսի գաղտնի ոստիկանութիւնը բացել է մի դաւադրութիւն սուլթանի կեանքի դէմ։ Դաւադիրները մտադրութիւն ունէին դինամիտով օդը թռցնել Իլդիզ-Կիոսկը։

—Կ. Պոլսից հաղորդում են, որ սուլթանը դիմեց Թիւրքաց նահանգապետներին մի շրջաբերականով, որի մէջ մատնացոյց է անում նրանց Թիւրքաց կառավարութեան բոլոր հրպատակների պաշտպանութեան անհրաժեշտութեան վրա, առանց դաւանութեան խտրութեան։ Բայց դրանից սուլթանը անհրաժեշտ է համարում խիստ միջոցներ գործ դնել անկարգութիւնների առաջն առնելու համար։ Ըստ երեւոյթին այդ շրջաբերականի երեւալու պատճառը Մուշում եւ Էրզրումում տեղի ունեցած անցքերն են, ուր հայերը կրկին քիւրդերի անգթութիւնների զոհ դարձան։ Վերջին տեղեկութիւնների համեմատ, Մուշի հայերը դիմեցին Ռուսաստանի օգնութեանը։ Ռուսաց հիւպատոսը մի զօրեղ պահակախմբով Էրզրումից ճանապարհ ընկաւ դէպի Մուշ։ Դրութիւնը Սասունում նոյնպէս չատ երկիւղալի է։ Ամենքն այն կարծիքի են, թէ Թիւրքերը դիտաւորութիւն ունեն վերջնականապէս ջնջել հայերին այդ տեղում։ Ամէրիկական հիւպատոսը Խարպուտի գործերի դրութիւնը չատ երկիւղալի է յայտարարում։

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

12 սեպտեմբերի

ԴԱՐՄՇՏԱԴՏ։ Մեծ Իշխան Նիկոլայ Նիկոլաեվիչ երէկ երեկոյեան ժամանեց Վոլֆսգարտէն։

Կ. ՊՕԼԻՍ։ Որովհետեւ վերջին տասն օրերի ընթացքում ժանտախտով հիւանդանալու ոչ մի դէպք չեղաւ, ուստի սանիտարական խորհուրդը վճռեց սեպտեմբերի 13-ից մաքուր անցագրեր տալ։

Կ. ՊՕԼԻՍ։ Ֆրանսական կառավարութիւնը հրաժարվեց ընդունել Բ. Դրան առաջարկութիւնը՝ Լօրանդօի գործը կարգադրելու վերաբերութեամբ, եւ դեսպանութեան խորհրդական Բակատի միջոցով նրանից այնպիսի պահանջներ կանի, որոնցով կարելի կը լինի գործը վերջացնել. նա պահանջում է ինն տոկոսի վճարումը։

ԿԻԵՎ։ Կիեվի նահանգական դատարանում քննվում էր մանկաբարձուհի Գէօրգիեվսկայի գործը, որ մեղադրվում էր արհեստական վիժում առաջացնելու մէջ, որի հետեւանքն էր մահը։ Հարցուփորձի ենթարկվեցին երկու էկսպերտ-բժիշկներ։ Մէկ ժամ խորհրդակցելուց յետոյ երդուեալները մեղադրեալին յանցաւոր ճանաչեցին, բայց արժանի ներողամտութեան. դատարանը դատապարտեց մեղադրեալին իրաւունքներից զրկելուն եւ չորս տարվայ բանտարկութեան։ Գէօրգիեվսկայա տարիքով կին է։

ՆԻԺՆԻ-ՆՈՎԳՈՐՈԴ։ Սեպտեմբերի 13-ին Սիբիրակայա նաւահանգստում այրվեց Զարուբինի «Միտեա» մարդատար չոգենաւը։ Մարդիկ ազատվեցին։

ՕՄՍԿ։ Ձիւն եկաւ։ Ցուրտ է։

ՊԷԿԻՆ։ Հօլանդական մինիստր-բէզիդէնտ Կրօբէլ առաջարկեց դիպլոմատիական մարմնի անդամներին հանդէս գալ ընդհանուր բողոքի չինական յանձնաժողովների գնալու դէմ, որոնց մտադրութիւն կայ ուղարկել գաղթած չինացիներից դրամական գումարներ առնելու նպատակով, վարձատրութիւնը վճարելու համար. այնուամենայնիւ միաբան քայլ հաղիւ թէ անվի։

ՄԱՐՍԷԼ։ Գեներալ Վուարօն ափ իջաւ առաւօտեան 10 ժամին։ Գնդապետ Սիլվէստր ողջունեց նրան Լուբէի անունից՝ հաղորդելով նախագահի շնորհաւորութիւնը գեներալին եւ արշաւախմբային զօրաբաժնին։ Ապա գեներալ Վուարօնին ողջունեց Լանկլան։ Շնորհաւորելով նրան եւ զօրքերին վերադառնալու առիթով յաղթութիւնը տանելուց եւ խաղաղութիւնը հաստատելուց յետոյ, նա գովում էր ծովագնացներին քաջութեան, դիսցիպլինայի, դիմացկանութեան, չափաւորութեան եւ մարդասիրութեան համար։ Ցիշելով չինական արշաւանքը, Լանկլան ասեց, որ այն ժամանակ երբ կատարվում էր խաղաղացման գործը, չինացիները հովանաւորութիւն էին որոնում ֆրանսիացիների մօտ, որոնց փափուկ վարմունքը նրանք գնահատեցին։ Ծովային մինիստրը շնորհակալութիւն յայտնեց արշաւախմբի կազմակերպողներին եւ յարգանք մատուցանելով սպանվածների յիշատակին, վերջացրեց իր ճառն ասելով, թէ զօրքը եւ նաւատորմն եւս արժանաւոր հանդիսացան դէմոկրատական Ֆրանսային։

14 սեպտեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ «Правительственный Вѣстникъ» լրագրում տպված է. «Ներքին գործերի մինիստրը, նահանգապետների կողմից մինչեւ սեպտեմբերի 12-ը իրան ներկայացրած տեղեկութիւնների հիման վրա, յայտարարում է, համաձայն Բարձրագոյն հրամանի 1901 թուի օգոստոսի 15-ից, պաշարեղէնի դժուարութիւնները վերացնելու միջոցների մասին, եւ մի քանի գաւառները անբարեյաջող պաշարեղէնի կողմից»։ Ներքին գործերի մինիստրը որոշեց նրից թոյլ տալ «Петербургскій Листокъ» լրագրի հատով վաճառումը եւ արգելել «Русское Слово» լրագրի հատով վաճառումը։—Թագաւոր Կայսրը, ցանկանալով պատուել դանիական թագաւորի 45-րդ դրագունեան գնդի պատերազմական ծառայութիւնները, որի հիմնելու օրից 200 տարին լրացել է, Բարձրագոյն հրամայել բա-

բեհաճեց հաչել Նորին Մեծութիւնը այդ զընդի մէջ։—Հեծելազօրքի գեներալ իշխան Ամիլախվարով գեներալ-ադիւտանտ է նշանակուած։ Ընդհանուր շտաբի ակադէմիայի շինութիւնների օծումը Պէտերբուրգէնսկի հրապարակի վրա տեղի կունենայ սեպտեմբերի 19-ին։

ԲՈՒՖՖԱԼՕ։ Զօլգօս մահվան պատժի է դատապարտված էլէկտրականութեան միջոցով։ Դատավճիռը կը գործադրվի մօտ հոկտեմբերի 15-ին։

ԲԷԼԳՐԱԴ։ Լրագիրները հաղորդում են, որ Բէլօպոլում, Հին Սերբիայում, ընդհարում տեղի ունեցաւ ալբանացիների եւ Թիւրքաց զինուորների մէջ, որի ժամանակ սպանվեցին եւ վիրաւորվեցին 54 հոգի։

ՏԱԳԱՆՐՕԳ։ Սեպտեմբերի 13-ին, ներկայութեամբ ցուցահանդէսի մասնաժողովի, նրա նախագահ Բօգօլիւբօվի, վարչութեան եւ քաղաքի ներկայացուցիչների, մաղթանքից յետոյ հանդիսաւոր կերպով օրհնվեց եւ բացվեց 2-դ գիւղատնտեսական տնայնագործական ցուցահանդէսը։

ԱՍԽԱԲԱԴ։ Միջին-ասիական երկաթուղու կրասնօվոդսկ կայարանին Տարտա հրուանդանի աղբիւրներից Կասպիական ծովի վրա ջուր մատակարարելու նախագիծը, «Закасп. Обозрѣніе» լրագրի խօսքով, ներկայացրված է երկաթուղիների վարչութեանը Պետերբուրգում։ Հաշիւը կազմված է 170 կուբիքական սաժէն ջրի համար օր ու գիշերվայ մէջ։ Ջրի անհրաժեշտ քանակութիւնը կը տրվի ժողովրդին։ Ջուրը կատարելապէս պէտքական է խմելու համար։ Տարտից մինչեւ Կրասնօվոդսկ ջրանցք անցկացնելու ծախսը, որը նշանակութիւն ունի ամբողջ Տուրկեստանեան երկրի համար, հաշված է 409,000 ռուբլի։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԾԱՑՏՆՈՒՄ Է

—

ԲԱԳՈՒ, Գ. Բ. Լաւ էր։ Անկարող եղանք տպագրել։

ԵՐԵՒԱՆ, Բ. Վ. Ձեր յիշած պատճառաբանութիւնները մեզ չեն համոզում։ Եթէ հոգեւոր իշխանութիւնը այնքան մանրացել է, որ սրա կամ նրա ջգրու է գործում, քանդում, այդ դեռ չէ նշանակում թէ մենք պիտի թագցնենք ճշմարտութիւնները։ Մի՞թէ վերջին եօթը տարիների բոլոր գործերը կարելի է արդարացնել նրանով, որ մեր գրուածքները բարկութիւն են պատճառել։ Լա՞ւ է...

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՊԼՏՔ Է ՄԻ ԴԱՅԵԱԿ

հայ կին, Բագուի համար։ Հարցնել Սօլօլակում, Բեհբութեան (նախկին Սաղօվայա) փողոցում, տ. № 54 գնդապետ Սահակեանի բընակարանում։

(չ. կ.) 1—2

Պետերբուրգի բժշկական վարչութեան թոյլատրութեամբ։ Մեծ արկղիկը 5 ռուբլի, փոքրը—3 ռ. եւ 1 ռ. 50 կ.։

ՆՈՐ ՄԻՋՈՑ

մազերը բուսցնելու եւ ամրացնելու համար, ոչնչացնում է թեփը։ Դուրս է եկել նաեւ բոլորովին նոր միջոց

ԶՈՒԻ ԿԱԹԸ

երեսին քնքշութիւն եւ սպիտակութիւն տալու համար, ոչնչացնում է արեւի պատճառած սեւութիւնը, մուները, տալիս է կաշուին քնքշութիւն եւ սպիտակութիւն։ Այդ գները չափաւոր են. մեծ սրուակը, արկղիկի մէջ, 2 ռուբլի, փոքրը—1 ռ. 50 կ. Ծախվում են բոլոր պարֆիւմերական եւ դեղավաճառական խանութներում։ Գլխաւոր պահեստը գտնվում է Պետերբուրգում, Գուշկինսկայա փողոց տ. № 15, ընակարան № 12. պահեստի բաժանմունքները գտնվում են. Թիֆլիսում կովկասեան դեղատան ապրանքների վաճառման ընկերութեան խանութում՝ Երեւանեան հրապարակ եւ նրա բաժանմունքում, Միքայէլեան փողոց եւ Բագուում. նաեւ Միքայէլեան կամուրջի վրա, Պապովի եւ Արիստակովի դեղատներում։ Օտարաքաղաքացիների պատուէրները կատարվում են անմիջապէս՝ պոստով։ 75—100

ԾԱԽՎՈՒՄ ԵՆ 10 ՌՈՒԲԼՈՎ „ՇՂԹԱՑ“

Նաւթարդիւնաբերական ընկերութեան փայեր։ Հասցէն՝ Հալաբար, Պետրոպավլովսկի փող., Պրովիանտսկի մագազինի հանդէպ, տուն Բայսողլովի, № 18. Սահակ Յակոբեանին։

ՆՈՐ ԲԱՑՎԱԾ Է
ԱՐՀԵՍՏԱՆՈՑ
եւ
ԿԱՐ ՈՒ ՁԵՒԻ ԴՊՐՈՑ

Ընդունվում են պատուէրներ կանանց եւ երեխաների հագուստների։ Օլգինսկայա փողոց, № 19։ 1—3

ՄԻ ՀԱՅՈՒՀԻ

որ գիտէ հայերէն, ռուսերէն եւ ֆրանսերէն լեզուները, կամենում է տնային վարժուհու պաշտօն ստանալ՝ 7—9 տարեկան փոքրահասակ մէկ կամ երկու աղջիկների հետ պարապելու համար։ Կը կամենար նաեւ կօմպանիօնկա լինել մի տիկնոջ։

Հասցէն՝ Большая Водовозная ул., домъ Сергѣева, № 23, спросить во дворѣ. 3—3

ՆՈՐՈԳՈՒՄ ԵՄ
ԱՄԵՆԱԷԺԱՆ ԳՆՈՎ

ցեցը կերած, այրված եւ փտած գորգեր, կապերտներ, ճնձեր...

Ադ. Тифлисъ, 7-й уч., Ахметская ул., д. № 43, Пепела Паремузова. 3—3

Հարկաւոր է մի ուսուցիչ Վերին Աղդանի ուսումնարանի համար։ Ցանկալի է, որ գիտենայ նաեւ պարտիզպանութիւն, չերտապահութիւն եւ մեղուապահութիւն։ Պայմանների համար կարող են դիմել երդուեալ հաւատարմատար Ստեփան Յարութիւնեանցին, Բագու. Պարապետ, տ. Ադամեանցի։ 3—3

Լոյս տեսաւ
ԲԺՇԿԱՊԵՏ ԱՐԾՐՈՒՆՈՒ
„ՄԻ ԹՄԻՐ“

2-դ տպագրութեամբ։ (3 պատկ.)
ԳԻՆՆ Է 5 Կ.

Դիմել՝ Книжный магазинъ Гуттенбергъ, կենտրոնական գրավաճառանոց եւ հեղինակի մօտ. Д-ру В. Арцруни. 7—10

ՑԷՆԶԱՒՈՐ ՈՒՍՈՒՑԻՉ

Քաղաքային երկդասեան դպրոցի ուսուցչի եւ գիմնազիայի հայոց լեզուի ուսուցչի իրաւունքներով։ Տալիս է մասնաւոր դասեր հայոց եւ ռուսաց լեզուներից եւ թուաբանութիւնից։ Ցանկութիւն ունի ծառայել նաեւ հայոց դպրոցներում։

Հասցէն՝ Тифлисъ, Троицкая улица, домъ № 11, кв. Мелкумова. 5—5

Լոյս տեսաւ
Ա. ԱՀԱՐՈՆԵԱՆԻ
ՄԽԻԹԱՐԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԻՒՆ
(200-ամեայ յօբելեանի առիթով)
Գինն է 5 կոպ.

Դիմել. Գուտտէնբէրգ գրավաճառանոց, Լորիս-Մէլիքեան փողոց, № 11։ 5—5

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ
Օր. Սաթենիկ
ԹԵՐՄԱՋԱՆԵԱՆՑ
ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ՀԻՒԱՆԴՆԵՐԻՆ

Առաւօտեան ժամը 9—2
Երեկոյեան ժամը 5—7

Վանքի մեծ փողոց, տուն Մարտիրոսեանցի։
(հ. կ.) 5—60

ԲԺՇԿԱՊԵՏ
ԳԷՈՐԳ ԹԱԴԷՈՍԵԱՆ

Ներքին եւ երեխայոց հիւանդութիւններ։

Ընդունում է ամեն օր, առաւօտեան 9—11 ժ., երեկոյեան (բացի կիրակի օրից) 6—7 ժ.։ Վէլիամինովսկայա փողոց, տ. 24։

5—5 (հ. չ. ե.)

„ԳՈՒՏՏԷՆԲԷՐԳ“ ԳՐԱԽԱՆՈՒԹՈՒՄ
վաճառվում են

Շիրվանզադէ.—Նամուս, գինն է 1 ռուբլի, Քաոս—1 ռ. 50 կ., Արսէն Դիմաքսեան—1 ռ. 50 կ., Կրակ—30 կ., Մելանիա—50 կ., Վէպիկներ—40 կոպէկ։ Ցանկացողները կարող են ստանալ եւ փառակազմ։

Նազարեան Է. ք. հ.—Ընտիր հատուածներ 1 ռ.—Անեկդոտներ 50 կ., Յիս. Քրիստ. մկրտութիւն եւ չարչարանքը 23 կոպէկ։

Արիստ. արք. Սեդրակեան.—Քահանայական խնդիր—1 ռ., Աժուռնական խնդիրներ—1 ռ., Յովհան. եպիս. Շահխաթունեանի կենսագրութիւնը 1 ռուբլի. Զսն Վիլիամ Դրեպէր 2 ռուբլի։

Ծերենց.—Երկունք—1 ռ., Թորոս Լեւոնի—1 ռ., Թէոդորոս Ռշտունի—1 ռուբլի։ Ընտիր Հայկազունք պատկերազարդ 2 ռ. 50 կոպէկ։ Զէյթունի անցեալէն եւ ներկայէն՝ քարտէզով 1 ռ. 50 կոպէկ։

Աղայեան Ղազարոս.—Արութիւն եւ Մանուէլ 60 կ., բանաստեղծութիւններ 1 ռ. 50 կ. Իմ կեանքի գլխաւոր դէպքերը 1 ռ. 20 կ., Ժամանակակից մատենախօսութիւն 20 կ.։

Հայկական ժողովրդական, ռուսերէն եւ հայերէն, եկուսը միասին 1 ռուբլի։

Դիմել՝ Тифлисъ. Книжный магазинъ „Гуттенбергъ“ (Лорисъ-Меликовская улица, № 11), Г. Галустяну. 2—2

Թիֆլիսի Հայուհեաց Բաբեգործական Ընկերութեան
ԼՈՒԱՑԱՆՈՑՈՒՄ
ԸՆԴՈՒՆՈՒՄ ԵՆ ԱՇԱԿԵՐՏՈՒՀԻՆԵՐ
15 տարեկան հասակից

Հասցէն՝ Գանձակայա փողոց, № 25. (չ. ե. հ.) 1—3

Ֆինանսների մինիստրի թոյլտուութեամբ
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ
(Баку, Прачешная, домъ Теръ-Ованесова)

Կուրսերի նպատակն է տալ ուսանողներին մասնագիտական-առեւտրական կրթութիւն եւ պատրաստել հմուտ հաշուապահներ։ Աւարտողները ստանում են ատեստատներ։ Կուրսերում աւանդվում են՝ 1) Առեւտրական թուաբանութիւն եւ թուաբանութիւն համրիչի վրա. 2) Հաշուապահութիւն՝ արդիւնաբերական-գործարանական, առեւտրական եւ բանկային. 3) Առեւտրական թղթակցութիւն. 4) Առեւտրական տնտեսագիտութիւն. 5) Առեւտրական եւ մուրհակային օրէնքներ. 6) Գեղագրութիւն եւ արագագրութիւն (ուղղագիր ձեռագրի)։

Ընդունելութիւնը՝ սեպտեմբերի 1-ից ամեն օր՝ կուրսերում եւ Եղբ. Յովհաննեան եւ ընկ. ԲԱԳՈՒԻ բաժանմունքում։ Կուրսերի կանոնադրութիւնը (уставъ) եւ մանրամասն ծրագիրը—տրվում եւ ուղարկվում են ձրիաբար։ Օտարաքաղաքացիները դիմում են՝ БАКУ, учредителю коммерческихъ курсовъ А. И. Теръ-Каспарову. (ե. չ.) 22—25

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ եւ ՊԱՆՍԻՕՆ
Ա. ՏԷՐ-ՅԱԿՈՎԲԵԱՆԻ
ՊՐՕԳԻՄՆԱԶԻԱՅԻ ԾՐԱԳՐՈՎ

Ընդունում է աշակերտներ, պատրաստում է գիմնազիաների, կադետների կօրպուսի, զեմլէմէրների, բէալական, առեւտրական եւ այլ ուսումնարանների համար։

Ուսումնարանում ուսուցանում են բարձրագոյն ուսումն ստացած մասնագէտներ, գիմնազիական ուսուցիչներ։ Աւանդելի առարկաներն են՝ կրօն, ռուսաց, հայոց, ֆրանսիական, գերմանական, լատինական, յունաց, վրաց լեզուներ, թուաբանութիւն, ալգեբրա, երկրաչափութիւն, աշխարհագրութիւն, պատմութիւն (ռուսաց եւ ընդհանուր), բնական գիտութիւն, նկարչութիւն, գրութիւն, երգեցողութիւն, երաժշտութիւն։

Նոյն տեղը ընդունվում են ԱՇԱԿԵՐՏՈՒՀԻՆԵՐ։ Օտարաքաղաքացիների համար կան ամենայն յարմարութիւններ։

Հասցէն. ТИФЛИСЪ, Гановская ул. № 11. 5—5

ԳԱՆՁԱԿ ՔԱՂԱՔՈՒՄ

Ուսումնարանական բարձրագոյն իշխանութեան թոյլտուութեամբ, ներկայ տարվայ օգոստոսի 20-ից բացվում են

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ
հանրակրթական դպրոցով եւ պանսիօնով

Հանրակրթական դպրոցում, ի միջի այլոց, աւանդվում են ֆրանսիական եւ գերմանական լեզուները։

Օտարաքաղաքացիները դիմում են՝ Елисаветполь, учредителю коммерческихъ курсовъ, Е. Н. Исаакову. (ե. հ. չ.) 10—10

ՀԱՇՈՒԱՊԱՀՈՒԹԵԱՆ դասընթացքի XIII շրջան
ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ

Հեղինակ «Զեռնարկի առեւտրական և գործարանական հաշուապահութեան»

ՈՒՍՈՒՑԱՆՈՒՄ ԵՒ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ Է

Երկու տեսի անձանց՝ 4 ամսվայ ընթացքում հաշուապահութիւն գործնականապէս, եւ բաշխաւորելով. և եղած դէպքերում յանձն է առնում պաշտօնի առաջարկել։

ՊԱՐԱՊՄՈՒՆՔԻ ԱՌԱՐԿԱՆԵՐՆ ԵՆ

Ա) Կրկնակի իտալական հաշուապահութիւն ըստ ամենայն առեւտրական ճիւղերի, հանդերձ նաւթային արդիւնաբերական և կերօսինի գործարանական հաշուետեսութեան։

Բ) Առեւտրական թուաբանութիւն։

Գ) Առեւտրական նամակագրութիւն։

Դ) Առեւտրական եւ մուրհակների կանոնագրութիւն։

Ե) Գեղագրութիւն և ամենավատ ձեռքերի ուղղելը։

Պարապմունքները սկսվելու են 1901 թվի սեպտեմբերի 15-ից, ճաշից յետոյ, և պարբերաբար շարունակվելու են իւրաքանչիւր ՉՈՐՍ ամսից յետոյ։

ԻՒՐԱՔԱՆՉԻՒՐ ԿՈՒՐՍԻ ՎՃԱՐՆ Է 60 ՌՈՒԲԼԻ

Ցանկացողները թող դիմեն գրաւոր կամ անձամբ 3 ժամից մինչև 6 ժամ երեկոյան, ԿՈՒԿԻԱ, Նիկոլաեվսկայա փողոց, սեփական տուն, № 46։ (Николаевская ул. № 46)։

Վերոյիշեալ հաշուապահութեան ձեռնարկը ծախվում է ԹԻՖԼԻՍՈՒՄ, հեղինակի մօտ, և Ռուսաստանի բոլոր լաւագոյն գրավաճառանոցներում։ ԳԻՆՆ Է 3 ռ. 50 կոպէկ։ Օտարաքաղաքացիները գիրքը գնելու համար կարող են դիմել հեղինակին, առանց պոստի ծախս վճարելու։ 25—25

Дозволено цензурою, Тифлисъ, 14 Сентября 1901 г.

Электропечатня Грузин. Изд. Т—ва, Б.-Ванкская ул.